

ԱՐԹՈՒՐ ԱՆԴՐԱՆԻԿՑԱՆ

ԺՈՂՈՎՐԴԻ ՀՈԳՈՒ ՄԱՐՍՈՒՌՆԵՐԻ ՏԱՐԵԳԻՐԸ

(Նվիրվում է Զապել Եսայանի ծննդյան 125-ամյակին)

Արևմտահայ գրականության ամենեն կատարյալ գրագետներեն մեկն է Զ. Եսայան, եթե ոչ ամենեն կատարյալը: Իբրև տաղանդ և իբրև գործունեություն, մանավանդ իբրև վաստակ լիովին արժանի է գրագետի իր տիտղոսին:

Զ. Եսայանի մեջ հայ գրականության ամենեն սխրալի շնորհները, կանացի զգայնության ամենեն սրտահույզ և իր ժողովուրդին հոգիին ամենեն խորունկ սարսուռները իրարու կմիանան: Անհկա խղճմտանք մըն է, սիրտ մը, միտք մըն է, հավասար ամբողջությամբ ու արդարությամբ... Եսայանի գործը ամբողջ մըն է: Անոր երկու մեծ բևեռները՝ անհատներու հոգին ու ժողովուրդներուն հավաքական զգայնությունը ընդմիջտ մվաճված կմնան անխորտակելի գործերու մեջ:

ՀԱՅՈՐ ՕՇԱԿԱՆ

Ընկատագիրը որքան շուայլ, նույնքան էլ անողոր ցտմվեց հայ գրականության փառքերից մեկի՝ Զապել Եսայանի (Հովհաննիսյան) հանդեպ: Անողոր, քանզի նրա կենսագրության վերջին, ամենամտալ էջը գոցվում է գրեթե ոչինչ չասող, պարզ, սահմնկեցուցիչ բնութագրումով՝ տրված կենսագիրների կողմից. «Կը մեռնի Սիպերիո մեջ տեղ մը, 1948 թվականին»: 60 տարի առաջ եղեաքախտ գրողը, զտարյուն հայ մտավորականը, հասարակական ազգային գործիչը, որի համար կյանքը հայի «հոգեկան ապրումներու պատկերացմամբ» (Ն. Աղբալյան) էր միայն դրսևորելի, ուժերի ներածին չափով, բովանդակ ողջ կյանքը ապրեց իբրև ստեղծագործական սխրանք, անհայտորեն հանգչում է իր ժողովրդի այն սուրբ մեռյալների պես, որոնց չարչարանքի ու մահվան ականատեսն է եղել տակավին 1909 թվականին, երբ Պոլսից մի հանձնախմբի հետ մեկնել է Ադանա աղետալների օգնություն ցուցաբերելու համար: Զ. Եսայանի տպավորությունների մատյանը տպագրվեց երկու տարի անց («Ավերակներում մեջ», Կ. Պոլիս, 1911 թ.), այն թերևս առաջին, ուղղակի արձագանքն էր մի ողջ ժողովրդի ցեղասպանության, առաջին ԾԻՉԸ, որ մարդկությանը տեղյակ էր պահում առաջիկա արհավիրքի՝ 1915 թվականի մասին: Այն, ինչ անխելի եղավ:

Զապել Եսայանի «Ավերակներում մեջ» ուղեգրությունը ամենևին էլ ողբերգության սուկական գրառում կամ արձանագրում չէ, ուրիշ բառով՝ ողբապատում, այլ ամբարված տառապանքի պողթեկման, վերածայքքման կենսապատում, երբեմն հայ հոգու ալեկոծումի ճշմարտաճիշ բողոքի արտահայտում. «Երկինքը սեցավ իմծի... ըսի թուրք կնոջը երեսն ի վար լալով. Աստծո բոլոր կածակները ձեր ոճիրները չպիտի կրնան պատժել, որ օրը և որ ժամուն ձեր քավության ժամանակը հասած պիտի ըլլա, այրիին, որբին ու մոր արցունքներում մեջ պիտի խեղդվիք...»: Դժվարին, չափազանց դժվարին է տալ ժամանակի սահմնկեցուցիչ իրականության պատկերը՝ ժամանակի «ինչպես որ է»-ի շեշտադրումներով: Եսայանը, լինելով ուղղակի ականատեսը դարասկզբյան ծավալվող իրադարձությո-

յունեների, չէր կարող հայի և մտավորականի, ազգային գործչի իր անխառն ակյունով չտրվել հայության անլուելի ճիչի հորձանքին, անմասնակից լինել «տառապանքի պատկերին»՝ որքան էլ զարհուրելիության ու «սարսափներուն» փոթորկումը ընկճեր լիաբուխորեն տրոփող ճրա հայի հոգին:

Այնուհանդերձ ամագործույն ցաւի մեջ, անահաճաճ էր երկինքն ի վեր վաւարող անկոտորում հաւատը: Հոսաբեկութիւնն ու ջլատումը տեղի էր տալիս «նառագայթող ճշմարտութեամբ» դեմ: Այլ կերպ՝ անհաւարիմ էր, մաս անհաւատալի և ազգավմաս. «Իրենց պարզ հոգեքանութիւնը չէր տանջվեր բնավ, ու հաւատք ալ ունեին, թե մեկ օրէն մյուսը պիտի ճշտվեր իրենց դերին մեծութիւնը, ու այն մարդիկը, որ շղթա կանցնեին իրենց ոտքերուն, օր մը թերևս իրենց կտրօքը պիտի զարդարեին պատվամշաններով: Մեզի կարելի չէր երկար խոսիլ իրենց հետ, բայց յուրաքանչյուրին դեմքը տպավորված էր անցնելի կերպով մեր միտքերում մեջ: Բան մը կար, որ կներդաշնակվեր մեր մտածումներում հետ, և առ ալ տառապանքիմ հպարտութիւնն էր»:

Զապել Եսայան գրողի, ազգային գործչի (իմշ, որ մեզանում քիչ է շրջանառվում, պարզ չիմացության՝, թե՛ իմշ-իմշ պատճառներով, Ա. Ա.) առաքելությունն այսպես և այսչափ չի ավարտվում: Ադամայում, ակամատեսը լինելով վաղօրոք ծրագրված հայաչինջ քաղաքականության, մա արդեն պարզորոշ տեսնում էր «սարսափի արտահայտության» հետագա ողջ ընթացքն ու զարգացումը:

1915 թվականի նախօրեին Ջ. Եսայանը, մի կերպ փրկվելով, ծախյալ անցնում է Բուլղարիա, այնտեղից՝ Կովկաս։ Նրան շարունակ տանջում է արևմտաֆայոց գաղթականության օրհասական վիճակը, հարյուր հազարավոր այն զանգվածների, որոնք ապաստանել էին Կովկասյան տարբեր քաղաքներում, բնակավայրերում։ Մինչև 1919 թվականը Ջ. Եսայանն իր գործուն դերակատարությունն է ունենում ազգային և հանրային կյանքում աշխատելով տարբեր խնամակալ մարմիններում։

Այսպիսին էր մրա մարդկային, ազգային, գրողական էությունը, իսկ իմքը չափազանց անկոտորում՝ մնացորդաց ճակատագրին ապավինաբար մեցուն լինելուն պարտ:

1920 թ. Զ. Եսայանը մեկնում է Եվրոպա, մասը կազմում Ավետիս Ահարոնյանի գլխավորած Հայաստանի պատվիրակությանը՝ շարունակաբար զբաղվելով գաղութահայության և որբերի ճակատագրով: Զ. Եսայանն ազգային-հասարակական գործունեությանն զուգահեռ ստեղծագործում է, 1935 թ. վերջապես Երևանում հաստատվելուց հետո (Հայաստանի Կառավարության հրավերով, դասավանդում է պետական համալսարանում արևմտյան երկրների գրականության պատմություն, Ա. Ա.) գրում է «Սիլիհտարի պարտեզներ», «Կրակն շապիկը», «Պրոմեթեոս ազատագրված», «Պարպա խաչիկ» չափազանց ուշագորավ ստեղծագործությունները, որոնց այսօր հանրությունն այնքան էլ ծանոթ չէ, այդպիսով վերահրատարակման անհրաժեշտությունը խիստ շահեկան՝ մեծանուն գրողի գրական ժառանգությունն ամբողջականացնելու առումով: Մանավանդ, որ գեղարվեստական այն աշխարհը, որ ստեղծել է Զ. Եսայանը, մեր գրականության պատմության մեջ տակավին դեռ արժեվորված և ըստ ամենայնի ուսումնասիրված չէ, և հոբելյանական բարեպատեն հաղթող կարելի է (և պարտավոր ենք) մպատակամիտել նրա ստեղծագործության վերարժեվորմանը, քանզի Զ. Եսայանի գրողական կենսադիրքորոշումը և գեղագիտական ըմբռնումները, վիպային-հոգեբանական թափանցումներն անխամրելի են մաս մեր ժամանակներում: